

Ի՞նչ է իրենից ներկայացնում My Health LA ծրագիրը:

- **My Health LA** ծրագիրը՝ դա ԱՆՎՃԱԸ առողջապահական ծրագիր է Լոս Անջելես վարչաշրջանի ցածր եկամուտ ունեցող բնակչության համար, ովքեր բժշկական ապահովագրություն չունեն:
- **My Health LA** -ը մի ծրագիր է, որի անդամները կարող են ստանալ ընթացիկ, բարձրորակ բուժօգնություն համայնքի կլինիկաներում առողջապահական ծառայություններ մատուցողների թիմի կողմից:
- **My Health LA** -ը դա ծրագիր է Վարչաշրջանի անապահով բնակիչների առողջությունը:



Ի՞նչ բուժօգնություն կարող եմ ստանալ **My Health LA** ծրագրի միջոցով:

- **My Health LA**-ի անդամների ստանում են ԱՆՎՃԱԸ հիմնական բուժօգնությունը, որի մեջ մտնում է.
 - ✓ Ընթացիկ առաջնային կանխարգելիչ բուժօգնությունը և առողջապահական վերահսկողությունը
 - ✓ Տեղեկություններ առողջապահության մասին և խորհրդատվություն
 - ✓ Մասնագիտական ծառայություններ Բժշկական ծառայությունների բաժանմունքում (DHS)
 - ✓ Հիվանդանոցային և արտակարգ իրավիճակների օգնություն DHS-ի կլինիկաներում և հիվանդանոցներում
 - ✓ Դեղատոմսով դուրս գրվող դեղորայք
 - ✓ Ալկոհոլի և Թմրանյութերի Չարաշահման դեմ Բուժման Ծառայություններ
 - ✓ Լաբորատոր ծառայություններ և անալիզներ
 - ✓ Այլ նմանատիպ բուժօգնություն
- **My Health LA**-ի անդամները բուժօգնությունը կարող են ստանալ Լոս

Ո՞վ կարող է դիմել **My Health LA** ծրագրի համար:

My Health LA-ն հետևյալ մարդկանց համար է.

- ✓ Ովքեր բնակվում են Լոս Անջելես վարչաշրջանում
- ✓ տարիքը 19 եւ ավելի մեծ
- ✓ Համապատասխանում են եկամտի պահանջներին (տես տեղեկաթերթիկի հետևի կողմը)
- ✓ Չունեն կամ իրավասու չեն բժշկական ապահովագրության համար

My Health LA ծրագիրը բժշկական ապահովագրություն ՉԷ—Եթե դուք ունեք բժշկական ապահովագրություն, մի հրաժարվեք դրանից:

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ես իրավասու եմ: Որտե՞ղ կարող եմ անդամագրվել:

- Ձանգահարեք անդամների սպասարկման կենտրոն 1-844-744-6452 համարով (MHLA): Անդամների սպասարկման կենտրոնները բաց են ժամը 8:00-ից մինչև 17:00, երկուշաբթիից ուրբաթ:
- Նախապես զանգահարեք ձեր կլինիկա՝ տեսակցություն նշանակելու կամ անդամագրվելու համար: Համոզվեք, որ կլինիկան ընդունում է նոր հիվանդներ: Դիմելը անվճար է:
- Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք dhs.lacounty.gov/mhla

Ի՞նչ արտոնություններ ունի **My Health LA** ծրագիրը:

- **My Health LA** ծրագրի հիմնական նպատակներից մեկը հիվանդին ցուցաբերվող բուժօգնությունն է: Անդամները կարող են ընտրել Medical Home -ի ցանկացած կլինիկա և ստանալ ընթացիկ բուժօգնությունը այդ կլինիկայում ողջ տարվա ընթացքում: **My Health LA** ծրագրի շրջանակներում կարող եք օգտվել ընդամենը մեկ Medical Home-ի կլինիկայից:
 - ✓ Medical Home-ը դա մի կլինիկա է, որտեղ հիվանդները այցելում են առաջնային բուժօգնության բժշկին կամ բուժքրոջը, ով ծանոթ է իրենց հիվանդներին ու լավ տեղեկացված է նրանց բժշկական պատմության մասին:
- **My Health LA** -ի անդամները կարող են ընտրել մեկ Համայնքային կլինիկա և նշանակել իրենց տեսակցությունները այդ կլինիկայում:
- Մի սպասեք մինչև հիվանդանաք, որպեսզի բուժօգնություն ստանաք—դուք կարող եք անվճար պարբերաբար կատարվող ստուգումներ ունենալ և ստանալ կանխարգելիչ բուժօգնություն ձեր բուժկետում:
- Ձեզ կտրամադրվի ID քարտ, որը ցույց կտա, որ դուք **My Health LA** -ի անդամ եք:
- Դուք կարող եք զանգահարել անվճար հեռախոսահամարով Անդամների սպասարկման կենտրոն ժամը 8:00-ից մինչև 17:00, երկուշաբթիից ուրբաթ: Աջակցություն տարբեր լեզուներին տիրապետող գործակալների կողմից:



ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆ - ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

"ՎՃԱՐԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ" ԾՐԱԳՐԻ ԽՆԴՐԱԳԻՐ – MY HEALTH LA

138% ՖԵՂԵՐԱԼ ԿԵՆՍԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԸ

(Ուժի մեջ Ապրիլի 1-2017 մինչև մարտի 31-ը, 2018)

ՏԱՆ ԱՊՐՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ¹	ԱՄՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԵԿԱՄՈՒՑԸ ²
1	\$ 1,387 կամ ավելի ցածր
2	\$ 1,868 կամ ավելի ցածր
3	\$ 2,349 կամ ավելի ցածր
4	\$ 2,829 կամ ավելի ցածր
5	\$ 3,310 կամ ավելի ցածր
6	\$ 3,791 կամ ավելի ցածր
7	\$ 4,272 կամ ավելի ցածր
8	\$ 4,752 կամ ավելի ցածր
9	\$ 5,233 կամ ավելի ցածր
10	\$ 5,714 կամ ավելի ցածր
11	\$ 6,195 կամ ավելի ցածր
12	\$ 6,676 կամ ավելի ցածր

12 անդամից ավել

Ամեն մի հավելյալ անդամի համար
ավելացրեք \$ 481

¹ Ընտանիքի անդամների քանակը հաշվելիս՝ ներառեք դեռ չծնված երեխային:

² ATP-ի դեպքում բոլոր պահումները հեռացվում են.

- \$90 ամեն մի աշխատողի համար:
- Երեխայի խնամք
- Բժշկական ապահովագրության ծախսեր և
- Վճարված ալիմենտը/երեխայի աջակցումը